

ուած եկեղեցիին եւ հոն կատարուած հրաշքներուն զարմանալի պատմութիւնները կը պատմէին ուխտաւորներ իրենց վերադարձին: Ս. Գէորգ այլևս եւրոպայի նպաստաւոր սուրբն էր, և անզղիոյ ծովագնաց թագաւորութիւնը, Փորզուկալ, Արակոն եւ Վալանսիա, ինչպէս նաև Մալթա եւ Ճենովայի հանրապետութիւնը զանհկա նկատեցին իրենց պաշտպանը:

Միջնադարեան ուխտաւոր մը՝ Փելլիքս Ֆապրի, 1483 ին Ս. Գէորգ եկեղեցին քանդուած կը գտնէ, բայց անոր մէկ կողմը մշտապէս կանթեղներ կը վառէին և յոյները պաշտամունք կը մատուցանէին: ԺՉ. դարուն Պոնիփակիոս կը յիշէ նոյն եկեղեցին որ Անզղիոյ թագաւորներէն մէկուն կողմէ շինուած էր, բայց անունը չի տար. հաւանաբար Առիւծասրտին գործն էր նորոգուած եկեղեցին: Անոր աւերակները վերջին տարիները նորոգուեցան յոյներէն, որոնք մինչև հիմակ ունին Լիւզի արքեպիսկոպոս անունով՝ երուսաղէմի պատրիարքին փոխանորդը: Բարձր սեղանի մը տակ Ս. Գէորգի մարմինը կը գտնուի այրի մը մէջ. տապանին վրայ կայ սուրբին նրբարուեստ պատկերը պառկած ձևով, և հետաքրքրական է ան անոր համար որ՝ կ'ըսուի թէ միակ թոյլատրուած պատկերն է յոյն եկեղեցիին մէջ: Աւանդութիւնը և զգացումը միանգամայն մեր ուշագրութիւնը յարգանք կը հրաւիրեն նոյն հանդարտ տեղւոյն՝ ուր պառկած է Անզղիոյ սուրբ պաշտպանին մարմինը: Եկեղեցին այժմ երկուքի բաժնուած է, մին եւ միւսը քրիստոնէական եկեղեցի՝ ուր կը գտնուի տապանը:

Ռամիկները կը հաւատան թէ Ս. Գէորգ միշտ կ'ապրի. իւրաքանչիւր յոյն եկեղեցի սուրբին պատկերը կը ներկայացնէ «Ս. Գէորգ ձիու մը վրայ երկար տէգով